



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 22 » 09 2020թ.

№ 08/ԼԱ/ - 395

Սեպտեմբերի 14-20-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Սեպտեմբերի 14-ին առանձին շրջաններում, 17-ին, 18-ի գիշերը՝ Լոռիում և Սյունիքի մարզում դիտվել է անձրև, ամպրոպ՝ մինչև 1-5մմ քանակությամբ: Մնացած օրերին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի միջին օրական ջերմաստիճանը սեպտեմբերի 14-16-ին, 18-19-ին նորմայից բարձր է եղել 3-6 աստիճանով, 17-ին և 20-ին՝ 1-4 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է սեպտեմբերի 14-15-ին. Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում դիտվել է $+32...+35^{\circ}\text{C}$, Սյունիքի հովիտներում, Տավուշում՝ $+28...+32^{\circ}\text{C}$ (Մեղրիում՝ $+33^{\circ}\text{C}$), Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ $+24...+29^{\circ}\text{C}$ աստիճան տաքություն (Գյումրիում և Արթիկում՝ $+30^{\circ}\text{C}$):

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է սեպտեմբերի 20-ին. Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ $+5...+10^{\circ}\text{C}$ (Աշոցքում, Գավառում, Մասրիկում $+4^{\circ}\text{C}$, Ստեփանավանում՝ $+3^{\circ}\text{C}$), Տավուշում, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում, Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում՝ $+12...+17^{\circ}\text{C}$ (Դիլիջան՝ $+7^{\circ}\text{C}$):

Սեպտեմբերի 14-ին՝ Աշտարակում և Մերձավանում, 20-ին՝ Մերձավանում դիտվել է 11-16մ/վրկ արագությամբ քամու ուժգնացում, պոռթկումները՝ մինչև 18-23մ/վրկ արագությամբ:

Սեպտեմբերի 14-ին Արթիկում դիտվել է անձրև 27մմ/1ժամ ինտենսիվությամբ, Աշտարակում՝ 1մմ տրամագծով կարկուտ:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում մնացել է անփոփոխ և կազմել՝ 1900.66մ (20.09.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 6 սմ-ով:

Հարգանքով՝
Տնօրենի ժ/պ

Լ.Ազիզյան